



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 նոյեմբերի 2012 թվականի N 1473 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱ-
ՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ - ԺԱՄԱՆԱ-
ԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-51-Ն կարգադրության 2-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարության դրույթների իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել պատասխանատու հանրապետական գործադիր մարմինների ղեկավարներին և առաջարկել օրենքով ստեղծված մարմինների ղեկավարներին՝ յուրաքանչյուր կիսամյակ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության խորհուրդ ներկայացնել հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. նոյեմբերի 27
Երևան



Ծ Ր Ա Գ Ի Ր – Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ
 ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Նպատակը	Միջոցառումները	Ժամկետը	Կատարողը
1	2	3	4
1. Ահաբեկչության կանխարգելմանը, բացահայտմանը և կասեցմանն ուղղված իրավական բազայի բարելավումը և կատարելագործումը, ահաբեկչության դեմ պայքարի բնագավառում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների և կազմակերպությունների գործունեության համակարգումը	1.1. Ուսումնասիրել և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություն սոցիալական, ռասայական, ազգային, կրոնական կամ ՀՀ սահմանադրությամբ արգելված այլ բնույթի խտրականություն քարոզող կամ տարածող տեղեկատվության ինտերնետային կայքերում տեղադրման կանոնակարգման վերաբերյալ:	2014 թ. առաջին կիսամյակ	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռստիկանություն ՀՀ արդարադատության նախարարություն
	1.2. Ուսումնասիրել և անհրաժեշտության դեպքում օրենսդրորեն ամրացնել պետական մարմիններում օգտագործվող տեղեկատվական ենթակառուցվածքների տեխնիկական և		2014 թ. երկրորդ կիսամյակ

1	2	3	4
	<p>ծրագրային միջոցներին տրվող անհրաժեշտ պահանջների մշակումն ու ընդունումը և այդ մարմինների պատասխանատվությունը սեփական կայքերում տեղադրված պաշտոնական տեղեկատվության նկատմամբ:</p>		<p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p> <p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>
	<p>1.3. Համապատասխան իրավական ակտերի մշակում կենսաապահովման, ռազմավարական և առավել վտանգավորության օբյեկտների ղեկավար և սեփականատեր հանդիսացող անձանց պատասխանատվության խստացման և պարտականությունների ընդլայնում այդ օբյեկտների հակահարձակական պաշտպանվածության ամրապնդման բնագավառում</p>	<p>2013 թ. երկրորդ կիսամյակ</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</p> <p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>
	<p>1.4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի համակարգում առաջացած ճգնաժամային իրավիճակների կառավարման ազգային պլանի մշակում և ներկայացում ՀՀ կառավարության հաստատմանը</p>	<p>2012 թ. դեկտեմբեր</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p>
	<p>1.5. Հանրային առողջապահության ոլորտում կենսաբանական, քիմիական գործոններով պայմանավորված ահաբեկչության կանխարգելմանը, բացահայտմանը և կասեցմանն ուղղված իրավական բազայի կատարելագործում</p>	<p>2013 թ.</p>	<p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների</p>

1	2	3	4
	1.6. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի կիրճան-վտանգությանը վերաբերող հարցերի աշխատանքային խմբի ստեղծում	2012 թ. դեկտեմբեր	նախարարություն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
	1.7. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկատվական համակարգերի ծրագրային ապահովության կարգերի արդիականացում	2013 թ. մարտ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն <<Նորք>> տեղեկատվավերլուծական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ)
	1.8. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության էլեկտրոնային հասցեների, ծածկագրերի գրանցման, վարման և փոփոխման ընթացակարգերի արդիականացում	2012 թ. դեկտեմբեր	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն <<Նորք>> տեղեկատվավերլուծական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ)
	1.9. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի	2012 թ.	ՀՀ աշխատանքի և

1	2	3	4
	<p>Նախարարության տեղեկատվական համակարգերի, վերկայքերի, ցանցերի կառավարման և տեխսպասարկման, ինչպես նաև տվյալների արխիվացման ընթացակարգերի և ժամանակացույցի արդիականացում</p>	<p>դեկտեմբեր</p>	<p>սոցիալական հարցերի նախարարություն <<Նորք>> տեղեկատվավերլուծական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ)</p>
	<p>1.10. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում օգտագործվող համակարգիչների և դրանց օգտագործողների աշխատանքի կազմակերպմանը ներկայացվող պահանջների և նորմերի մշակում</p>	<p>2012 թ. դեկտեմբեր</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն <<Նորք>> տեղեկատվավերլուծական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն (համաձայնությամբ)</p>
	<p>1.11. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտի ՀՀ օրենսդրության շարունակական համապատասխանեցում միջազգային չափանիշներին</p>	<p>2012-2015 թթ.</p>	<p>ՀՀ կենտրոնական բանկ ՀՀ գլխավոր դատախազություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</p>

1	2	3	4
	<p>1.12. <<Օտարերկրացիների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների նախաձեռնում՝ Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների բնակվելու ռեժիմը խստացնելու, Հայաստանի Հանրապետությունից օտարերկրացուն վտարելու գործընթացը պարզեցնելու (եթե նրա՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելը հակասում է ՀՀ ազգային անվտանգության շահերին) ուղղությամբ:</p>	2013 թ. 1-ին կիսամյակ	<p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p> <p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</p>
2. Ահաբեկչության դեմ պայքարի ձևերի, մեթոդների և միջոցների օպտիմալացում	<p>2.1. ՀՀ ահաբեկչության դեմ պայքարի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պետական մարմինների միջև համագործակցության ձևերի ու միջոցների շարունակական կատարելագործում</p> <p>2.2. Ահաբեկչության դեմ պայքարի պետական համակարգի ուժերի և միջոցների գործունեու-</p>	մշտապես	<p>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային</p>
		2013թ. նոյեմբեր	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային

1	2	3	4
	թյան տիպային պլանների մշակում և դրանց խաղարկումը վարժանքների ժամանակ		<p>անվտանգության ծառայություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p> <p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>
3. Ռազմավարական և կարևոր նշանակության այլ օբյեկտների ինժեներատեխնիկական համակարգերի անխափան գործունեության ապահովում	3.1. Ռազմավարական և կարևոր նշանակության այլ օբյեկտների ինժեներատեխնիկական համակարգերի ստուգումներ	մշտապես	<p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>
	3.2. ՀՀ ՋՌԻ-ի խոցելի թիրախների ուսումնասիրում, դրանց անվտանգության ապահովման համար պարբերաբար տեղեկատվության	մշտապես	ՀՀ պաշտպանության նախարարության

1	2	3	4
	փոխանցում շահագրգիռ ծառայություններին		Ռազմական նստիկանություն, ԶՈՒ ԱՀՏԱ, ԳՇ օպերատիվ- հետախուզական վարչություն
	3.3. Երկաթուղային տրանսպորտի օբյեկտներում հակասահաբեկչական գործողություններից պաշտպանվածության տեխնիկական միջոցների ներդրման, ուղեբեռներն ստուգող անվտանգության համակարգի կազմակերպման և տարածքների պահպանության ապահովում	կոնցեսիոն պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ կառավարությանն ատրնյաթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն ատրնյաթեր պետական եկամուտների կոմիտե
	3.4. Ավտոճանապարհային արհեստական կառույցների դիվերսիոն-ահաբեկչական տեսանկյունից խոցելի կետերում հսկողության տեսախցիկների տեղադրում, պահակագործի ապահովում	2013-2015 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ կառավարությանն ատրնյաթեր ազգային անվտանգության ծառայություն
	3.5. ՀՀ ավտոկայարաններում և ավտոկայաններում հակասահաբեկչական պաշտպանվածության մեխանիզմների ներդրում և տեխնիկական հագեցվածության բարելավում	<<Հայավտոկայարան>> ՓԲԸ-ն կոնցեսիոն պայմանագրով փոխանցելու կամ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

1	2	3	4
		վարձակալության հանձնելու ընթացքում	
	3.6. ՀՀ հեռուստահեռարձակման համակարգի էլեկտրամատակարարման պահուստային գեներատորների անխափան աշխատանքի ապահովում, տարածքի ֆիզիկական պաշտպանության և արտակարգ իրավիճակների ահազանգման համակարգերի վերազինում տեսագրման և ազդանշանային սարքավորումներով	2012-2013թթ	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
	3.7. Փոստային առաքումների փոստային անվտանգության ապահովում	մշտապես	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
	3.8. Երևանի մետրոպոլիտենի կայարանային թունելախորշերի մուտքերում ազդարարման համակարգի ներդրում, հերթապահի սենյակում ազդարարող սարքի տեղադրում: Ինժեներական հանգույցներում ազդարարման համակարգերի ներդրում, ինժեներական կառույցների համալրում հսկողության հատուկ սարքավորումներով: Երևանի մետրոպոլիտենի մուտքերում և թունելներում հրդեհային և այլ	1 տարի ֆինանսական միջոցների առկայության դեպքում	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

1	2	3	4
	<p>արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգի ներդրում և միացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնին:</p>		
	<p>3.9. Երևանի մարդաշատ վայրերում, մշակութային և ժամանցի հասարակական վայրերում անվտանգության, հակահրդեհային, տեսաձայնագրող համակարգերի, պատկերի բիոսկանավորման եղանակով անձանց նույնականացման սարքերի տեղադրում: Հակահրդեհային և այլ համակարգերի միացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնին:</p>	<p>մեկ տարի ֆինանսական միջոցների առկայության դեպքում</p>	<p>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>
	<p>3.10. Ազգաբնակչության խմելու ջրի ջրադբյուրների, կապտաժային կառույցների, պոմպակայանների, օրվա կարգավորիչ ջրամբարների ապահովումը ֆիզիկական պաշտպանվածության ժամանակակից համակարգերով և միացումը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնին:</p>	<p>մշտապես</p>	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե</p> <p>Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ մարզպետարաններ</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների</p>

1	2	3	4
<p>4. Ռադիոակտիվ նյութեր արտադրող, փոխադրող, օգտագործող կամ պահեստավորող օբյեկտների նախագծային սպառնալիքի գնահատում և ֆիզիկական պաշտպանության համակարգի ուժեղացում</p>	<p>4.1. Հայկական ԱԷԿ նախագծային սպառնալիքի վերագնահատում</p>	<p>2013 թ.</p>	<p>Նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</p>
	<p>4.2. Հայկական ԱԷԿ ֆիզիկական պաշտպանության համակարգի ուժեղացում</p>	<p>2015 թ.</p>	<p>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե</p>
	<p>4.3. Միջուկային վառելիքի ներկրման ընթացքում ռադիոակտիվ նյութերի փոխադրման ֆիզիկական անվտանգության ապահովում</p>	<p>մշտապես</p>	<p>Հայկական ԱԷԿ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն առընթեր ազգային</p>

1	2	3	4
			անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն ատրնյներ ՀՀ նստիկանություն
	4.4. Ռադիոակտիվ նյութեր արտադրող, փոխադրող, օգտագործող կամ պահեստավորող օբյեկտների նախագծային սպառնալիքի գնահատում	2014 թ. և տարին մեկ անգամ վերագնահատում	ՀՀ կառավարությանն ատրնյներ ազգային անվտանգության ծառայություն
	4.5. Ռադիոակտիվ նյութեր արտադրող, փոխադրող, օգտագործող կամ պահեստավորող օբյեկտների ֆիզիկական պաշտպանության համակարգի ուժեղացում	2016 թ. ըստ նախագծային սպառնալիքի գնահատման	ՀՀ կառավարությանն ատրնյներ ազգային անվտանգության ծառայություն ՀՀ կառավարությանն ատրնյներ ՀՀ նստիկանություն ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե
	4.6. Բարձր հզորություն էներգաարտադրող կայանների համակարգաստեղծ բարձրավոլտ ենթակայանների ու գծերի, միջպետական ԷՀԳ,	մշտապես	Էներգետիկայի ոլորտի տնտեսավարող սուբյեկտներ՝ համաձայն

1	2	3	4
	Էլեկտրաէներգետիկական համակարգի գլխավոր կարգավարման կենտրոնի և մագիստրալ գազամուղերի ֆիզիկական պաշտպանության սպահովում		գործող օրենսդրական կարգի և սեփական նախաձեռնության
5. Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների ֆիզիկական պաշտպանության հետ կապված միջադեպերի, տիրագուրկ միջուկային և ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման դեպքերի տեղեկատվական բազայի ստեղծում	Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների ֆիզիկական պաշտպանության հետ կապված միջադեպերի, տիրագուրկ միջուկային և ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման դեպքերի տեղեկատվական բազայի ստեղծում	2014 թ.	<p>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</p> <p>ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>
6. Միաբեկյական, այդ թվում նաև՝ կիբեռահաբեկյական գործողության հետևանքների վերացման կարողությունների զարգացում	6.1. Արտակարգ իրավիճակների առանձնահատկությունների հաշվառում	2013 թ. մարտ	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
	6.2. Միաբեկյական հնարավոր ազդեցության օբյեկտների և ահաբեկյական գործունեության միջոցների հաշվարկում	2013 թ. հունիս	<p>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռադիոակտիվություն</p>

1	2	3	4
			<p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>
<p>7. Համապատասխան մասնագետների պատրաստում և որակավորման բարձրացում</p>	<p>7.1. Մասնակցություն ԻԿԱՕ-ի անվտանգության ռեզիդնալ կենտրոններում ավիացիոն անվտանգության և քաղաքացիական ավիացիայի համակարգում ճգնաժամային իրավիճակի կառավարման դասընթացներին</p> <p>7.2. Միջուկային և ռադիոակտիվ նյութերի հետ աշխատանքներ իրականացնող օբյեկտների, միջուկային տեղակայանքների ֆիզիկական պաշտպանության հարցերով մասնագետների պատրաստում և վերապատրաստում</p> <p>7.3. Կենսաբանական, քիմիական զենքով պայմանավորված սահմանափակ կանխարգելման ուղղությամբ հանրային առողջապահության ոլորտի մասնագետների պատրաստում,</p>	<p>2012 թ. 4-րդ եռամսյակ</p> <p>2015 թ.</p> <p>2015 թ.</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ռատիկանություն</p> <p>ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե</p> <p>ՀՀ առողջապահության նախարարություն</p> <p>ՀՀ արտակարգ</p>

1	2	3	4
	<p>գիտելիքների և որակավորման բարձրացման շարունակական կատարելագործում</p> <p>7.4. Դիվերսիոն-սահաբեկչական խմբերի բացահայտմանը և վնասագերծմանն ուղղված գորավարժանքների անցկացում</p>	<p>մշտապես</p>	<p>իրավիճակների նախարարություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p> <p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>
	<p>7.5. Հակասահաբեկչական օպերատիվ և օպերատիվ-մարտական ստորաբաժանումների աշխատողների մասնագիտական ուսուցում, այդ թվում արտասահմանյան երկրների ուսումնական հաստատություններում</p>	<p>մշտապես</p>	<p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p>

1	2	3	4
	7.6. Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կարողությունների զարգացման ուղղությամբ պետական իրավասու մարմինների և հաշվետու անձանց աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացում	2012-2015 թթ.	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)
	7.7. Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կարողությունների զարգացման ուղղությամբ ՀՀ կենտրոնական բանկի աշխատողների մասնագիտական որակավորման բարձրացում	2012-2015 թթ.	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)
	7.8. Ահաբեկչության կանխարգելման միջոցառումների իրագրելման ուղղությամբ մանկավարժների վերապատրաստում	2013 թ.	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>Կրթության ազգային ինստիտուտ (համաձայնությամբ)</p>
	7.9. Շարժական հեռախոսակապի թվային համակարգի բարձրակարգ մասնագետների ուսուցում և վերապատրաստում (յուրաքանչյուր	2012-2013 թթ.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն

1	2	3	4
	<p>աշխատատեղի համար 2 մասնագետ) համակարգի էլեկտրասնուցման, ծրագրային սպահովման չարտոնված մուտքի կանխարգելման ուղղությամբ</p>		
<p>8. Բնակչության շրջանում տեղեկատվության տարածում և կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպում</p>	<p>8.1. Ռազմավարական նշանակության օբյեկտ- ների շրջանում բնակվող ազգաբնակչության միջավայրում դիվերսիոն և ահաբեկչական գործողությունների յուրահատկությունների ու գործելակերպի կանոնների լուսարանման աշխատանքներ</p> <p>8.2. Ահաբեկչության կանխարգելման միջոցա- ռոմների իրագրելման բաց դասընթացների կազմակերպում ավագ դպրոցներում, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում</p>	<p>մշտապես</p> <p>2012թ. դեկտեմբեր</p>	<p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</p>

1	2	3	4
			ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն
	8.3. Կրթական, մշակութային և սոցիալական արժեքների ձևավորման, հանդուրժողականության քարոզչության, հասարակական երկխոսության համար պայմանների ստեղծմանն ուղղված՝ ահաբեկչության կանխարգելման թեմայով համաժողովների, կլոր սեղանների, սեմինարների կազմակերպում մշակույթի և արվեստի գործիչների, հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ	2013թ. ընթացքում (շարունակական)	ՀՀ մշակույթի նախարարություն
	8.4. Կրոնական և մշակութային բազմազանության վերաբերյալ հասարակության շրջանում տեղեկատվության ընդլայնմանը, տարբեր կրոնական և էթնիկ խմբերի վերաբերյալ հասարակական կարծիքի և վերաբերմունքի ձևավորմանն ուղղված պետական աջակցության շարունակում ազգային փոքրամասնությունների լեզուներով հրատարակվող մամուլին և գրականությանը, ՀՀ մարզերում ազգային փոքրամասնությունների մշակույթը ներկայացնող միջոցառումների կազմակերպում	ընթացիկ	ՀՀ մշակույթի նախարարություն ՀՀ մարզպետարաններ
	8.5. Իրավասու մարմինների և հասարակական կազմակերպությունների միջոցով ՀՀ սահմա-	մշտապես	ՀՀ կրթության և գիտության

1	2	3	4
	<p>նամերձ համայնքների բնակչության լայն խավերի շրջանում կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպում հաշվի առնելով սահմանամերձ բնակավայրի առանձնահատկությունները:</p>		<p>նախարարություն</p> <p>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p> <p>ՀՀ պաշտպանության նախարարություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն</p> <p>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն</p> <p>ՀՀ մարզպետարաններ</p>
<p>9. Անհատի և հասարակության օրինական շահերի, ազատությունների իրավունքների պաշտպանության ապահովում, քաղաքացիական հասարակության բոլոր ենթահամակարգերի փոխգործակցության ապահովում</p>	<p>9.1. Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում</p>	<p>2013-2015 թթ.</p>	<p>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն</p> <p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>
<p>10. Ահաբեկչության դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցության շարունակական զարգացում</p>	<p>10.1. ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի, ԱՊՀ և այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում ահաբեկչության վերաբերյալ միջազ-</p>	<p>ընթացիկ</p>	<p>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</p>

1	2	3	4
	գային կոնվենցիաների, պայմանագրերի, ծրագրերի և համաձայնագրերի կատարման հետ կապված ազգային զեկույցների և (կամ) հարցաշարերի պատասխանների կազմման աշխատանքների համակարգում		
	10.2. Ահաբեկչության դեմ ուղղված երկկողմ և բազմակողմ համագործակցության շարունակական զարգացում. ՄԱԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների շրջանակներում գործող ահաբեկչության դեմ պայքարի կառույցներում մասնակցության ապահովում	ընթացիկ	ՀՀ արտաքին գործերի նախարարություն
	10.3. Արժույթի միջազգային հիմնադրամի և Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի կողմից ՀՀ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգի 3-րդ փուլի գնահատման հաշվետվությամբ սահմանված խորհրդատվությունների կենսագործում և առաջընթացի վերաբերյալ 2-րդ հաշվետվության ներկայացում	2012 թ.	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)
	10.4. Մասնակցություն փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում գործունեություն իրականացնող միջազգային կառույցների աշխատանքին	2012-2015 թթ.	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)
11. Բնակչության կենսական շահերի պաշտպանության և սոցիալական խնդիրների լարվածությունը մեղմելուն ուղղված գործողություններ	11.1. ՀՀ տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային 4-րդ աստիճանի վնասվածու-	2012 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ արտակարգ

1	2	3	4
	<p>թյուն ունեցող և քանդված բնակարանային ֆոնդի բնակիչների բնակարանային խնդիրների լուծման հայեցակարգին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության արձանագրային որոշման ներկայացում ՀՀ կառավարություն:</p>		<p>իրավիճակների նախարարություն</p>
<p>12. Հայաստանի Հանրապետությունում անվտանգության ապահովման բնագավառում հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների կատարում</p>	<p>12.1. Պետական նպատակային ծրագրային և թեմատիկ աշխատանքների մշակում և իրականացում</p>	<p>2012-2015 թթ.</p>	<p>ՀՀ կրթության և գիտության նախարարություն</p> <p>ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա (համաձայնությամբ)</p>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

